

---

## **ՀԱՐԱՎԿՈՎԿԱՍՅԱՆ ԵՐԿՐՄԵՐԻ ԿԱՐԳԱՎԻճԱԿԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՏԱՐԱԾՐՁԱՆՈՒՄ 2008 թ. ՕԳՈՍՏՈՍԻՑ ՀԵՏԸ**

### **ԱՇԽՏ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**

Հայաստանի, հարևան Աղբեջանի ու Վրաստանի հանրապետությունները, որոնք հետխորհրդային շրջանում համարվում էին մեկ միասնական տարածաշրջան, վերջին տարիների աշխարհաքաղաքական զարգացումների և գլոբալ ուժերի դիրքորոշումների փոփոխության պատճառով այլևս որպես այդպիսին չեն դիտվում: Խոսքը պայմանականորեն ձևավորված Հարավային Կովկաս տարածաշրջանի տրոհման մասին է, որը առաջին հերթին Վրաստանի գործունեության արդյունք է: Արդյոք հարավկովկասյան տարածաշրջանի փաստացի տրոհմանը հաջորդած 2008 թ. օգոստոս-սեպտեմբեր ամիսներին տեղի ունեցած դեյտական առաջարկությունը հարվածում է տարածաշրջանի երկրների ազգային շահերին, և արդյոք այդ տրոհումը անհուսափելի էր...

Վրաստանում «վարդերի հեղափոխության» շնորհիվ իշխանության եկած Մ. Սահակաշվիլին ակտիվացրեց վրացական իշխանությունների՝ հարավկովկասյան տարածաշրջանը կազմակերպությունը: Ընդգծված արևատանետ արտաքին քաղաքականությունը գուգակցվում էր ՌԴ հետ հարաբերություններում լարվածության աճով: Սահակաշվիլու վարչակարգը այդպիսով փորձում էր միանձնյա ստանձնել ԱՄՆ-ի և ԵՄ-ի վստահելի ու անփոխարինելի գործընկերոջ դերը տարածաշրջանում:

Վրացական իշխանական վերնախավի նման կտրուկ մարտահրավերը պատահական չէր. այն թելադրված էր հետխորհրդային ժամանակաշրջանի իրողություններով, որոնց հետևանքով վրաց գործիչների շրջանում հաստատվել էր այն մտայնությունը, որ Հայաստանի և Աղբեջանի միջև առկա հակամարտությունը խոչընդոտում է հիմնական գլոբալ ուժերի (ԱՄՆ, ՌԴ, ԵՄ) կողմից հարավկովկասյան տարածաշրջանի միասնական և կայուն ընկալմանը, ինչպես նաև համատեղ ծրագրերի իրագործմանը: Այդ հանգամանքը Վրաստանի համար գնահատվում էր որպես արգելք առավել սերտ ինտեգրվելու արևմուտքի տնտեսական և ռազմաքաղաքական կառույցներին:

Արևմուտքը թեպետ ձևականորեն փորձում էր պահպանել տեսանելի հակասարակշրությունը տարածաշրջանի երեք պետությունների հետ փոխհարաբերություններում, ինչը դրսնորպում էր ՆԱՏՕ-ի և ԵՄ-ի կառույցների մեջ երեք պետությունների հակասարաչափ ներգրավումով, սակայն չէր հանապատասխանում վրացական էլիտայի ծրագրերին, որ ամեն կերպ փորձում էր սահմանազատվել «պրոբլեմատիկ հարևաններից»:

Արևմուտքին առավել սերտ ինտեգրվելու նպատակով Վրաստանը նախընտրում էր համագործակցել տարածաշրջանային այլ կառույցների հետ (օր.՝ ՍՕՏՀ, ԳՈՒԱՄ և այլն)՝ փորձելով փոխել հարավկովկասյան պե-

տությունների՝ որպես մեկ միասնական տարածաշրջանի միջազգային հանրության ընկալումը: Միևնույն ժամանակ Սահակաշվիլու վարչակարգը փորձում էր կարևորել Վրաստանի դերակատարությունը ողջ Կովկասում՝ գերակայության հասնելու նպատակով:

ճակատագրի հեգնանքով Յարավային Կովկասի տարածաշրջանի միասնական ընկալման օպերատորը առաջ էր քաշվել Վրաստանի նախկին նախագահ Է. Շևարդնաձեի կողմից և շրջանառվում էր 1990-ական թթ. սկսած, որը, սակայն, ամբողջովին ծախողվեց նրան հաջորդած Մ. Սահակաշվիլու կառավարման ժամանակաշրջանում: Վրացական իշխանության ձեռնարկումները տարածաշրջանի նախկին ձևաչափը փոխելու ուղղությամբ «պսակվեցին հաջողությամբ», սակայն ոչ այն արդյունքով, որն ակնկալում էր Սահակաշվիլու վարչակարգը:

Պատմական օպերատումները ցույց են տվել, որ Վրաստանը արտաքին քաղաքական կողմնորոշման հարցում ավանդաբար կամ էլ հանգանաքների բերումով Կովկասի տարածաշրջանի գործընթացներում եղել է առաջատար:

Դեռևս 19-րդ դարի սկզբին Վրաստանը դարձավ առաջամարտիկը Կովկասում Ռուսական կայսրության ազդեցության տարածման համար՝ առաջինը կամովին ընդգրկվելով Ռուսական կայսրության կազմի մեջ: Այդ քայլն ուղղված էր տարածաշրջանում Թուրքիայի և Պարսկաստանի դերի նվազմանը և ռուսական ազդեցության աճին:

Այնուհետև Ռուսաստանում սոցիալիստական հեղափոխության հաղթանակի հետևանքով թուլացած կենտրոնական իշխանության և երկիշխանության պարագայում վրաց առաջնորդները, համագործակցելով Յայաստանի և Ադրբեյջանի հետ, նախաձեռնեցին Անդրկովկասի սեյմի կազմավորումը: Ընդ որում, հայ-ադրբեյջանական հակամարտության պայմաններում ընդհանուր մարմինների դեկավար պաշտոնները ստանձնում էին ազգությամբ վրացի գործիչներ: Վրաստանը, 1918 թ. նայիսին հոչակելով իր անկախությունը, առաջինը դուրս եկավ Անդրկովկասյան սեյմի կազմից, որին հաջորդեցին Յայաստանը և Ադրբեյջանը: Վրաստանը դիմեց այդ քայլին՝ նախօրոք գաղտնի պայմանավորվածություն ձեռք բերելով Թուրքիայի գլխավոր դաշնակից Գերմանիայի հետ, որը Արագին աշխարհամարտի ժամանակ պատերազմում էր Անտուանտի (Անգլիա, Ֆրանսիա, Ռուսաստան) երկրների դեմ: Անկախ հոչակված Վրաստանը, որը Գերմանիայի նոր դաշնակիցն էր Կովկասում, կարողացավ նրա հովանու ներքո խուսափել թուրքական ավերիչ արշավանքներից, որից առավելապես տուժեցին Յայաստանը և Ադրբեյջանի հայ ազգաբնակչությունը: Ենտագայում Խորհրդային Ռուսաստանը Կովկասը վերամիավորեց նոր ստեղծված խորհրդային կայսրությամբ: ԽՄՀՄ կազմում Յայաստանը, Ադրբեյջանը և Վրաստանը վերստին դիտվում էին որպես մեկ միասնական տարածաշրջան:

Վրաստանը պատմական օպերատում տարբեր փուլերում ճկուն է գտնվել արտաքին կողմնորոշման հարցում, սակայն թույլ է տվել նաև սայրաքումներ...

Ժամանակակից իրավիճակում Վրաստանը կրկին փորձում է գործադրել պատմական իր հարուստ փորձառությունը՝ նոր դրսևորումներով: Ենտխոհրդային շրջանում էականորեն փոխվել է կովկասյան երկրների վրա ազդեցություն ունեցող պետությունների շրջանակը: Կովկասում ա-

վանդաբար ազդեցիկ պետությունների՝ Ռուսաստանի, Թուրքիայի, Իրանի շարքին ավելացել են և երկու խոշոր մրցակիցներ՝ ԱՄՆ-ը և ԵՄ-ը:

Քաղաքական գրավչության տեսակետից Կովկասի երեք երկրների շրջանում անվիճելի առաջնություն է Վայելում Եվրոպական միությունը, որի հետ քաղաքական և տնտեսական ոլորտներում համագործակցությունը գերակա ուղղություն է Հայաստանի, Ադրբեյչանի և Վրաստանի արտաքին քաղաքականության համատեքստում<sup>1</sup>: Այլ է տարածաշրջանի երկրների դիրքորոշումը ռազմաքաղաքական համագործակցության հարցերում և անվտանգության հիմնախնդիրներում:

Տարածաշրջանի երկրների համար բաժանարար նեկ այլ գործոն կարող է համարվել կոլեկտիվ անվտանգության (ՀԱՊԿ և ՆԱՏՕ) հակադիր համակարգերին հարելը: Հայաստանը, Ադրբեյչանը և Վրաստանը հայտնվեցին գլոբալ ուժերի մրցակցության շրջապատույտում, ինչը նույնպես իր բացասական դերակատարումն ունեցավ տարածաշրջանի երկրների միասնական ընկալման հարցում:

Ժամանակակից միջազգային հարաբերությունների համակարգում գոյություն ունեն կոլեկտիվ անվտանգության երկու ազդեցիկ համակարգեր՝ ՆԱՏՕ (ԱՄՆ և Եվրոպական երկրներ) և Ռուսաստանի գլխավորությամբ ԱՊՀ շրջանակներում գործող հավաքական անվտանգության մասին պայմանագիրը: Այդ գլոբալ երկու ուժերի միջև մինչ օրս էլ շարունակվում է պայքարը ԽՍՀՄ և սոցիալիստական երկրների ճամբարի փլուզման հետևանքով հատկապես Կովկասում առաջացած ուժային բացը լրացնելու ուղղությամբ<sup>2</sup>: Ո՞Դ վերջին տարիներին ակտիվորեն սկսեց ներգրավվել այդ պայքարում՝ առավել անզիջում դարձնելով իր դիրքորոշումները: Տնտեսապես հզորացող Ո՞Դ վերահիմաստավորեց իր արտաքին քաղաքականությունը կովկասյան երկրների հանդեպ ոչ միայն քաղաքական, այլև տնտեսական առումով: Ի տարբերություն խորհրդային շրջանի՝ Ռուսաստանի Դաշնությունը այժմ ձգտում է ամրապնդել իր ազդեցությունը կովկասյան երկրներում՝ տիրանալով նրանց էներգետիկ, տրանսպորտային, կոնյունիկացիոն և բանկային ոլորտներին:

Կովկասյան տարածաշրջանում Հայաստանի, Վրաստանի և Ադրբեյչանի պարագայում բախվում են ոչ միայն ԱՄՆ, Ո՞Դ, ԵՄ քաղաքական շահերը, այլև տնտեսականը: Տարածաշրջանում բաժանարար գծեր են առաջանում նաև տնտեսական մրցակցության ոլորտում, որը գուգորդվում է գլոբալ ուժերի քաղաքական ազդեցության սահմաններով: Հաճախակի ծագող տնտեսական պատերազմները (օր.՝ ռուս-Վրացականը) դրա վառ դրսևնորումներից են: Ո՞Դ, իր տնտեսական ազդեցության ոլորտ գցելով Հայաստանին և մասնակցություն ունենալով Ադրբեյչանի էներգետիկ ծրագրերին, փորձեց վերահաստատվել նաև Վրաստանի տնտեսության, էներգետիկայի և կոնյունիկացիաների ոլորտում: Սակայն ԱՄՆ քաղաքական ազդեցության տակ գտնվող Վրաստանը երկարէ պատճեց դրեց Ռուսաստանի տնտեսական ներթափանցման ճանապարհին: Նաև այդ հանգամանքով են պայմանավորված Ո՞Դ կիրառած տնտեսական սանկցիաները Վրաստանի դեմ, որը, ի հեճուկս Սահակաշվիլու վարչակարգի ցանկությունների,

<sup>1</sup> Steu EU relations with Armenia, Azerbaijan and Georgia, www.eu.int/external\_relations/

<sup>2</sup> Steu Чечнявский С. И. Кавказская стратегия Вашингтона // "Международная жизнь", 1999, № 1, т2 25:

առավելապես կախված է ռուսական շուկայից և էներգակիրներից, քան ԱՄՆ ֆինանսական աջակցությունից:

Այսպիսով, ի տարբերություն Վրաստանի, որը իրական հնարավորություն ունի ընդգրկվելու ՆԱՏՕ-ի կազմի մեջ, Հայաստանը և Աղրբեջանը ընդունում են Ռուսաստանի միջնորդական դերը ԼՂ հակամարտության կարգավորման գործում: Հայաստանը նաև ԱՊՀ շրջանակներում գործող Կոլեկտիվ անվտանգության պայմանագրի անդամ է, ինչի շնորհիվ անվտանգության իրական երաշխիքներ է ձեռք բերել ՈԴ և պայմանագրի անդամ երկրների կողմից<sup>3</sup>:

Աղրբեջանը, որը Վրաստանի նման ընդգրկված չէ կոլեկտիվ անվտանգության որևէ համակարգում, փորձում է այդ բացը լրացնել Թուրքիայի հետ երկողմ ռազմաքաղաքական համագործակցության միջոցով: Թուրքիան բազմից իր պաշտոնյաների շուրթերով հաստատել է տարածաշրջանային իր քաղաքականության առաջնայնությունը՝ հանդես գալ Աղրբեջանի շահերի պաշտպանությամբ, այդ բվում նաև ռազմաքաղաքական ոլորտում<sup>4</sup>:

Հարավային Կովկաս տարածաշրջանի փաստացի (դե ֆակտո) տրոհվածության պայմաններում, ռուսական նախաձեռնությունները անհաջողություն էին արձանագրում Վրաստանի հետ փոխհարաբերություններում: Այդ հանգամանքը բացատրվում է Վրաստանի՝ ամերիկյան ազդեցության գոտում գտնվելու փաստով: Սահակաշվիլու կառավարման շրջանում Վրաստանում գերակայում է ԱՄՆ դերակատարումը թե՛ քաղաքական և թե՛ տնտեսական բնագավառներում:

Միևնույն ժամանակ անհաջողություն ունեցան նաև ամերիկյան նախաձեռնությունները Հայաստանի հետ ռազմաքաղաքական համագործակցությունը խորացնելու հարցում, ինչը դրսևորվեց ՆԱՏՕ-ին անդամակցելու Հայաստանի ցանկության բացակայությամբ, քանի որ Վերջինին ազգային անվտանգության երաշխիքները տարածաշրջանում ապահովում է ՀԱՊԿ շրջանակներում ՈԴ հետ դաշնակցելու միջոցով:

Վերոհիշյալ հանգամանքները հաստատում են կովկասյան եռյակի (Հայաստան, Վրաստան և Աղրբեջան) միասնական ընկալման բացառումը: Եվ քանի որ երկարատև ռազմաքաղաքական և տնտեսական մրցակցության պայմաններում գլոբալ ուժերից որևէ մեկը ի վիճակի չեղ կովկասյան եռյակի շրջանակում հասնելու գերակայության, ապա անխուսափելի եր նաև եռյակի իրավական (դե յուրէ) տեսակետից տրոհումը: Դա պարզապես ժամանակի խնդիր էր, քանի որ գլոբալ ուժերը, երկարատև մրցակցության պայմաններում չկարողանալով մենաշնորհային դիրք զբաղեցնել տարածաշրջանում, բնականաբար ձգտելու են իրավական կողմից ուղվագծել ու սահմանազատել իրենց ազդեցության սահմանները: Այդ իրագործելու ուղղությամբ հարմար առիթ դարձավ ռազմական ճանապարհով հարավուական և արխազական խնդիրները լուծելու Սահակաշվիլու վարչակարգի ձեռնարկած քայլը, որի հաջող ելքի դեպքում, ազգամիջյան ներքին խնդիրներից ձերբազատված Վրաստանը ՆԱՏՕ-ի կազմի մեջ շուտակույթ ընդգրկվելու իրական հնարավորություն կունենար:

<sup>3</sup> Տե՛ս Տիշենկո Գ. Воруженные силы и военно-политический курс Армении // "Армения: проблемы независимого развития". М., 1998, № 558-559:

<sup>4</sup> Տե՛ս Ջանգիր Արալի. Армяно-азербайджанский конфликт. Баку, 1995, № 47:

Տարածաշրջանի իրավական (դե յուրէ) տրոհումը իրականություն դարձավ 2008 թ. օգոստոսի վրաց-հարավուական հակամարտությունից հետո, երբ ԱՄՆ և ՌԴ իրենց գործողություններով ըստ Էռլյան հաստատեցին տարածաշրջանի երկրները ազդեցության գոտիների բաժանելու իրենց ձգուումը...

Սահակաշվիլու վարչակարգը գտնում էր, որ Վրաստանը առավել քիչ է խոցելի արտաքին վտանգի առջև, քանի որ արխազական և հարավուական հակամարտությունները համարվում էին Վրաստանի ներքաղաքական խնդիրը, այլ ոչ թե ազգամիջյան հակամարտություն ԼՂ-ի օրինակով: Սակայն այդ հաշվարկը Կովկասում դրսեորվող ԱՄՆ - ՌԴ մրցակցության պարագայում դարձավ անիրատեսական և բումերանգային: Դրանում, հարկավ, կարևոր դեր խաղաց նաև ՆԱՏՕ-ին Վրաստանի անդամակցության հեռանկարը, ինչը հակասում է Կովկասում ՌԴ շահերին: Քանզի պաշտոնական Կրեմլը, Վ. Պուտինի նախագահության տարիներից սկսած, բազմիցս հայտարարել է, որ նախկին ԽՍՀՄ տարածքը Ռուսաստանի բացարձիկ հետաքրքրությունների շրջանակում է<sup>5</sup>:

ՌԴ-ն առաջին գլոբալ ուժն է, որ 2008 թ. օգոստոս-սեպտեմբեր ամիսներին միակողմանիորեն դե յուրէ հաստատեց հարավուվկասյան տարածաշրջանի մասնատվածության փաստը: Տապալելով Վրացական ծրագրերը Հարավային Օսիայի և Արխազիայի խնդիրները ռազմական ճանապարհով լուծելու հարցում՝ որպես հաջորդ քայլ Ռուսաստանը պաշտոնապես ճանաչեց Արխազիայի և Հարավային Օսիայի անկախությունը, ինչը գործնականում՝ իրավական տեսակետից, նշանակում էր տարածաշրջանում նոր պետությունների հայտ գալը:

Վրաստանի միջազգային և տարածաշրջանային հեղինակության անկմանը գուգահեռ ՌԴ ակտիվացրեց իր միջնորդական առաքելությունը Հայաստանի և Աղրբեջանի միջև հակամարտության խաղաղ կարգավորման գործում՝ նախագահները նշանաձնելով միանձնյա դեր:

ՌԴ, փորձելով ապահովագրել իրեն ԱՄՆ-ի և որոշ Եվրոպական երկների կողմից հնչող մեղադրանքներից, ինչպես նաև ապահովելով իր գերակա դիրքը Հայաստանի և Աղրբեջանի միջև եղած հակամարտության խաղաղ կարգավորման գործընթացում, նախաձեռնեց Մոսկվայում հանդիպում (2008 թ. նոյեմբերին) նախագահների մակարդակով: Մոսկվայի Մայնորֆ պալատում՝ ՌԴ-ի, Հայաստանի և Աղրբեջանի նախագահների ստորագրած հօչակագիրը «Ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորման սկզբունքների մասին»<sup>6</sup> մեկ անգամ ևս ընդգծեց Ռուսաստանի գերակա դիրքը Կովկասում և հաստատեց բաժանարար նոր գծի սկզբնավորման փաստը:

Մոսկվյան դեկարացիան ԼՂ հակամարտության խաղաղ կարգավորման սկզբունքների վերաբերյալ, որն առավելապես առնչվում է Հայաստանի և Աղրբեջանի հարաբերություններին, շատ նմանություններ ունի այն դրույթների հետ, որոնք 2004 թ. ամրագրված են ԵՄ «Նոր հարևանության քաղաքականության» մեջ<sup>7</sup>: Կովկասյան եռյակը, ԵՄ հետ ստորագրելով համագործակցության վերոհիշյալ ծրագիրը, պարտավորվում

<sup>5</sup> Տես "Независимая газета", 15 апреля 1999:

<sup>6</sup> Տես "Голос Армении", 4 ноября 2008:

<sup>7</sup> Տես Ա. Հարությունյան, Եվրոպական Միություն, Եր., 2005 թ, էջ 417:

էր «նպաստել տարածաշրջանում խաղաղության և կայունության հաստատմանը ու հակամարտությունները կարգավորել միայն խաղաղ ճանապարհով»:<sup>8</sup> Սակայն Միացյալ Եվրոպայի առջև ստանձնած այդ պարտավորությունները անտեսվում ու ոտնահարվում էին թե՝ Աղրբեջանի և թե՝ Վրաստանի պետական պաշտոնյաների կողմից, որոնք մշտապես հնչեցնում էին հակամարտությունը գենքի ուժով լուծելու ռազմատեսնչ հայտարարություններ:

Միացյալ Եվրոպան հետևողական չգտնվեց այդ մարտահրավերներին արձագանքելու հարցում, քանի որ փորձում էր Հայաստանի, Աղրբեջանի, Վրաստանի և ԵՄ-ի փոխհարաբերություններում ապահովել նուրբ հավասարակշռություն:

Անդրադառնալով ԵՄ-ն միավորող դերին՝ որպես կովկասյան եռյակի երկրների արտաքին քաղաքականության նախապատվություն և նրա դերակատարմանը տարածաշրջանի երկրների քաղաքական գործընթացում՝ պետք է առանձնացնել ԵՄ քաղաքական ազդեցությունը և գրավչությունը տարածաշրջանի երկրների համար: Սակայն այդ գրավչությունը իսպառ բացակայում է ռազմաքաղաքական ու անվտանգության ոլորտներում ԵՄ հետ հարաբերվելու հարցում: Եթե քաղաքական ու տնտեսական համագործակցության ոլորտում ԵՄ միավորող դեր է կատարում տարածաշրջանի երկրների համար, որը դրսերպվում է ԵՄ կառույցների մեջ առավել սերտ ինտեգրվելու ընդհանուր ցանկությամբ (կովկասյան եռյակի երկրները իրենց արտաքին քաղաքականության մեջ գերակա ուղղություն են համարում եվլոպականը), ապա տարածաշրջանի երկրների ռազմաքաղաքական նախապատվություններն ու անվտանգության հայեցակրգերը էականորեն տարբերվում են: Տարածաշրջանի երկրների շրջանում եվլոպական ուղղությամբ անվտանգության ոլորտի հանդեպ նախապատվության բացակայությունը բացատրվում է Եվրոպայի ներքին ու արտաքին անվտանգության հարցերի չլուծված լինելով, որի համար էլ ԵՄ-ն ջանքերն ուղղում է առավելապես եվլոպական մայրցանաքի պաշտպանության ու անվտանգության քաղաքականության կատարելագործմանը:

Ի տարբերություն կովկասյան եռյակի փոխհարաբերություններում կայունություն և խաղաղություն հաստատելու ուղղությամբ ԵՄ գործադրած ջանքերի՝ ՈԴ 2008 թ. օգոստոսից հետո հատակ սահմանազատեց խաղարար իր նախաձեռնությունների շրջանակը: Այդ սահմանագիծը հստակ ուրվագծում էր տարածաշրջանի երկրների՝ ռուսական ազդեցության գոտում գտնվելու հանգամանքը: Մոսկվյան դեկլարացիայի հետաքրքրությունների ասպարեզը տարբերվում է ԵՄ քաղաքական նախաձեռնություններից, քանի որ ՈԴ իր ռազմաքաղաքական ներկայությամբ և անմիջական ազդեցության լծակներով տարածաշրջանում անվիճելի առաջատար է ԼՂ հարցում հակամարտող երկու կողմերի համար: Վրաստանի բացառումը կովկասյան բանակցային գործընթացում Ռուսաստանի դեկավարությունը պատճառաբանում է Սահակաշվիլու վարչակարգի հետ հարաբերակցվելու ցանկության բացակայությամբ:

Տարածաշրջանային գործընթացներից Վրաստանը մեկուսացնելու ուղղությամբ Մոսկվայի դրսերպած ակնհայտ ձգտումը վկայում է տարա-

<sup>8</sup> A Stability pact for the Caucasus, consultative document, [www.ceps.be](http://www.ceps.be)

ծաշրջանի երկրների միջապետական երկխոսության ոլորտում սահմանագատող գծերի առաջացման նաև:

Մինչեւ մոսկովյան պայմանավորվածությունները հստակ սահմանում են այն քայլերը, որոնք պետք է իրագործեն հայկական և ադրբեջանական կողմերը ՀՂ հակամարտության խաղաղ կարգավորման ուղղությամբ: Մոսկովյան դեկարտացիայի 3-րդ կետում նշվում է, որ պայմանավորվող կողմերը, ներառյալ Ռուսաստանի Դաշնությունը, համաձայնվում են խաղաղ կարգավորման գործընթացը զուգորդել համապատասխան իրավական պարտավորություններով և միջազգային երաշխիքներով բոլոր կողմերի համար բոլոր փուլերում: Ուշադրության է արժանի դեկարտացիայի եզրափակիչ՝ 5-րդ կետը, որում նախագահները կարևորում են հակամարտության խաղաղ կարգավորման և փոխադարձ վստահության վերականգնման ուղղությամբ համապատասխան պայմանների իրականացումը<sup>9</sup>:

Դեկարտացիայի վերոհիշյալ կետերը արձանագրում են Ադրբեջանի նախկին ռազմատեսչ քաղաքական գծից որոշակի նահանջ, մինչդեռ դրանից առաջ Ադրբեջանը բացառում էր Հայաստանի հետ որևէ կարգի շփում, հարաբերություն կամ համաձայնություն, ինչը, ըստ ադրբեջանական կողմի, կարող է իրավական տեսակետից հաստատել գործող ստատուս քվոն:

Մոսկովյան դեկարտացիայի քաղաքական դիվիզներները ՌԴ համար այն էր, որ մեկ անգամ ևս միջազգային հանրությանը ապացուցում էր, որ ո՞չ ԱՄՆ և ո՞չ էլ ԵՄ, այլ Ռուսաստանն է Կովկասում ազդեցիկ ուժը:

Ի տարբերություն Վրաստանի՝ Հայաստանը և Ադրբեջանը պահպանում են տեսական հավասարակշռությունը գլոբալ ուժերի և տարածաշրջանի ազդեցիկ կենտրոնների միջև ընթացող նորակցության պայմաններում: Պատահական չէ, որ մոսկովյան հանդիպմանը հաջորդած շրջանում Հայաստանի նախագահ Ս. Սարգսյանը և Ադրբեջանի նախագահ Ի. Ալիկը այցելեցին Բրյուսել և Անկարա, որտեղ պարզաբանեցին իրենց պայմանավորվածությունների նշանակությունը տարածաշրջանի համար՝ մասնավորապես ընդգծելով այն հանգանանքը, որ մոսկովյան պայմանավորվածությունները ուղղված չեն Կովկասում գլոբալ այլ ուժերի շահերի դեմ:

Բրյուսել այցելության ժամանակ (2008 թ. նոյեմբերին) ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղարի հետ ունեցած բանակցությունների ընթացքում ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը, բարձր գնահատելով մոսկովյան հանդիպման արդյունքները, հատկապես արժևորեց Հայաստան-ՆԱՏՕ հարաբերությունների ներկա մակարդակը նաև տարածաշրջանային անվտանգության անրապնդման տեսակետից: Հայաստանի նախագահը կարևորեց ՆԱՏՕ-ի հետ համագործակցությունը Անհատական համագործակցության ծրագրի շրջանակում: ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղարը իր հերթին կարևորեց հայրության երկխոսության սկիզբը ՀՂ հակամարտության խաղաղ կարգավորման գործում<sup>10</sup>:

Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիկը 2008 թ. նոյեմբերի 6-ին դիմեց թուրքիայի խորհրդարանին ուղերձով, որտեղ պարզաբանեց մոսկովյան հանդիպման արդյունքները և ընդգծեց, որ դրանք հույս են ներշնչում ՀՂ հակամարտության խաղաղ կարգավորման համար: Նա նշեց նաև, որ

<sup>9</sup> Տես "Голос Армении", 4 ноября 2008:

<sup>10</sup> Տես Armenian Information Agency, www.arminfo.am

Աղրբեջանի և Թուրքիայի միասնությունը կայունացնող գործոն է տարածաշրջանում, և հույս հայտնեց, որ «Կովկասում կայունության հարթակ կազմելու» Թուրքիայի առաջարկը կնպաստի Թուրքիայի առավել սերտ ներգրավմանը տարածաշրջանի գործընթացներում<sup>11</sup>:

Այսպիսով, Հայաստանի և Աղրբեջանի արտաքուստ հավասարակշռված քաղաքականության պայմաններում Վրաստանը հայտնվում է մեկուսացած վիճակում՝ բարդ և լարված հարաբերություններ ունենալով կովկասյան տարածաշրջանում ազդեցիկ Ռուսաստանի և Իրանի հետ:

Գլոբալ ուժերի կողմից տարածաշրջանի միասնական ընկալման հարցում մոտեցումների փոփոխությունը հանգեցնում է տարածաշրջանի մեկ այլ ձևաչափի փոխակերպման:

Նախկին Հարավային Կովկասը, որի հանդեպ գլոբալ ուժերը վարում էին արտաքուստ հավասարակշռված քաղաքականություն, այժմ գոյություն չունի, քանի որ փոփոխել է մոտեցումը տարածաշրջանի երկրների հանդեպ՝ առաջ բերելով սահմանազատման նոր գծեր: Ո՞Դ ազդեցության գոտում ընդգրկված են Հայաստանը, Արևագիան, Հարավային Օսիան և որոշ չափով Աղրբեջանը, իսկ ԱՄՆ-ի ազդեցության գոտում՝ ԶԼԱՏՎԱԾ և Ներքին լուրջ խնդիրներ ունեցող Վրաստանը:

Տարածաշրջանի երկրներն ըստ ազդեցության գոտիների սահմանազատելու փաստը անխուսափելիորեն անդրադառնում է հարևան պետությունների փոփոխաբերությունների որակի վրա: Այսպես, օրինակ, Վրաստանը հակազդում է Հայաստանի այն ձեռնարկումներին (օր.՝ Երկարգիծ կառուցել վրացական Փոքր նավահանգստից Հայաստան՝ Ախալքալաքի և Ախալցխայի միջով, Ո՞Դ հետ ցամաքային հաղորդակցություն՝ Վերին ու Ներքին Լարսի ուղիներով), որոնք, ըստ վրացական իշխանությունների, կարող են հետագայում օգտագործել ռուսական զորախմբի կողմից Վրաստանի վրա հարձակում իրականացնելու նպատակով:

Կովկասյան եռյակի հեռանկարների հարցին անդրադառնալով՝ պետք է ընդգծել, որ տարածաշրջանի երկրների համար մերձեցնող գործոն կարող է դառնալ գլոբալ հիմնական ուժերի հանդեպ ընդհանուր մոտեցումների մշակումը: Այդ գործընթացը կարելի է իրագործել տարածաշրջանի համար ընդհանուր այլընտրանքային քաղաքականության (ներտարածաշրջանային և արտաքին) մշակմանը, որում ազգային նախապատվությունները որոշ հարցերում կարող են ստորադասվել տարածաշրջանի ընդհանուր շահերին: Դա հնարավորություն կընձեռի առավել արդյունավետ դիմակայելու միջազգային հարաբերություններում առկա ժամանակակից մարտահրավերներին:

**АШОТ КАРАПЕТЯН – Изменение положения южнокавказских стран после августа 2008 г.** – Армения и её соседи – Азербайджан и Грузия – в последние годы, по сути, не рассматривались глобальными силами как единый регион. Между тем на Южном Кавказе сталкиваются не только политические, но и экономические интересы США, РФ и ЕС, и в результате конкуренции, которая сопровождается утверждением политического влияния каждой из глобальных сил, здесь появляются новые разделительные линии.

<sup>11</sup> Տես Itar-tass world service, [www.liberty.dialog.com](http://www.liberty.dialog.com)

Распад региона с правовой точки зрения стал реальностью после августовского (2008) грузино-южноосетинского конфликта, когда США и РФ подтвердили своими действиями, что страны региона поделены на сферы влияния...

Следует подчеркнуть, что фактором сближения стран региона может явиться выработка общих подходов к основным глобальным силам. Этот процесс осуществим на альтернативной основе, с разработкой общей для трёх стран политики (внутрирегиональной и внешней), в которой национальные предпочтения в отдельных вопросах могут быть подчинены интересам региона. Это позволило бы более эффективно противодействовать современным вызовам в международных отношениях.

**ASHOT KARAPETYAN - *The Change in Status of South-Caucasian Countries after August 2008*** - In fact, the Republic of Armenia and its neighbouring Republics of Azerbaijan and Georgia have not been regarded as a single region by the world authorities. The Caucasian region is the place of clash of the political and economic interests of the USA, RF, and EU. The on-going competition between the world authorities produces newer demarcation lines, as well as establishes their political influence.

From the legal viewpoint, the breakup of the region (de-jure) has become a reality after the August conflict between Georgia and South Ossetia in 2008, when the USA and the RF by their actions actually confirmed the fact of splitting the countries of the region into the spheres of influence.

When addressing the issue of the Caucasian Three, it is worth mentioning that the development of common approaches to the world authorities can serve as a factor of rapprochement for the regional countries. The process may be implemented on an alternative basis by developing a common regional policy (internal and external) and by conceding some of the national preferences to the regional interests. In this way, it will be possible to resist the contemporary international challenges more effectively.